


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ**

Դրեթէ բոլոր քրիստոնէական եկեղեցիները կ'ընդունին միայն մէկ ընդհանրական եկեղեցիի մը գոյութիւնը. բայց հակառակ այս գաղափարին այսօր քրիստոնէութիւնը բաժնուած է բազմաթիւ հատուածներու ուրոնք յաճախ իրարու մրցակից և հակառակորդ գտնուած և նոյնիսկ անոնցմէ կարեւոր թիւ մը միւսները ոչ-ուղղափառ, հերետիկոս, մոլորեալ, ոչ-քրիստոնեայ մակդիրներով սրակած է:

Առաջին դարու մէջ իսկ սկսան շիրտաւորումներ յառաջ գալ Բրիստոնեայ Եկեղեցիին ծոցին մէջ, որ մեծ ջանքեր թափեց իր անուանական միութիւնը անխախտ պահելու: Հակառակ այս ջանքերուն Դ. դարուն մէջ զայն կը գտնենք բաժնուած: Եկեղեցիին ջատագոված միութիւնը գաղափարի, դաւանանքի, քրիստոնէական կեանքի արտայայտութեան ձեւերուն նոյնութիւնն էր: Այսպիսի միութիւն մը անկարելի էր եւ հետեւարար բաժանումը անխուսափելի:

Հայց. եկեղեցին, արդիւնքը Պաղեստինեան (եթէ ընդունինք մեր եկեղեցիին աւանդութիւնները), Ասորական և Յունական միսիօնարներու ջանքերուն, շատ կանուխէն կ'սկսի ցուցնել այսպիսի բաժանումներու հետքերը: Պաղեստինեան-Ասորական կամ

Արեւելեան քրիստոնէութիւնը, որ շատ կանուխէն թափանցած էր Հայաստանի խորերը, և Յունական կամ Արեւմտեան քրիստոնէութիւնէ, որ աւելի վերջերը սկսաւ իր գոյութիւնը զգալի ընել, կը գտնենք իբր հակառակորդ և մրցակից: Հետզհետէ Արեւելեան ազգեցութիւնը նուազեցաւ, եկեղեցին որոշ չափով մը հեղինակեցաւ և կորսնցուց իր նախկին պարզութիւնը, թէպէտ մինչև հիմա դեռ կը կրէ նախալուսաւորչեան քրիստոնէութեան կարգ մը նշանները: Մեր հին մատենագիրները Հայաստանի մէջ գտնուող շատ մը աղանդներու գոյութիւնը կը յիշեն, զորօր. Պաղիկեաններ, Թոնարակեցիք, Կասքեցիք, Արեւորդիք, Մծղնէութեան յարողներ ևլն, որոնց մէջ դիւրին է գտնել նախնական պարզ քրիստոնէութեան, Մազդէականութեան և տարբեր քրիստոնէական երանգաւորումներու հետքերը: Ասոնցմէ թերեւ էն կարեւորն է Պաղիկեանները, որոնք կրցան իրենց գոյութիւնը պահել մինչև ԺԹ. դարու կէսը երբ միացան Հայ Բողոքականներու:

Պէտք է որ Բրիստոնեայ Եկեղեցին այսպէս բազմաթիւ հատուածներու բաժնուի: Այս է ներկայիս է՛ն կարեւոր հարցերէն մէկը զոր եկեղեցին լուծել կ'աշխատի: Լօզանի ժողովը, զանազան բողոքական եկեղեցիներու մերձեցման ջանքերը, Հնդկաստանի, Չինաստանի, Գանատայի միացեալ եկեղեցիները այս հարցը լուծելու համար առնուած քայլեր

են: Դիտողութեան արժանի կէտ մըն է թէ ասոնց շատերուն մէջ ո՛չ թէ ձուլումի, միօրինակ ձեւի վերածելու ձգտումը՝ այլ գործակցութեան, այլապանութեան մէջ միութեան զաղափարը կը տիրէ: Տարբեր խորհելու, զգալու, և արտայայտելու ազատութիւնը անվթար պահուած է: Թոյլատու ոգիին յաղթանակն է այս: Եթէ այս ոգին ամէն դարու մէջ և ամէն տեղ պէտք եղած չափով զօրաւոր ըլլար՝ Բրիտանիայ Եկեղեցին հիմա աւելի պայծառ երեւոյթ մը պիտի ցուցնէր: Գաղափարի երանգաւորումներու և հոսանքներու զոյութիւնը ամէն տեղ տեսնուած իրողութիւն մ'է: Նոյն իսկ Կաթոլիկ եկեղեցիին մէջ այսօր տարբեր հոսանքներ կան: Այսօր Հայց. եկեղեցւոյ մէջ արմատական, բարենորոգչական և պահպանողական հոսանքներ կան: Յոյն Օրթոտոքս եկեղեցիին մէջ ազատական շարժում մը ծայր տուած է: Տարբեր եկեղեցիները, արգիւնքը աշխարհագրական, ցեղային, մշակութային տարբերութիւններուն ու պայմաններուն, և նոյն եկեղեցիի մէջ այս տարբեր հոսանքները կ'էկրնան լայնախոհ և թոյլատու ոգիով իրերը քննել և գնահատել՝ շատ դիւրութեամբ կըրնան հասկցողութեան եզր մը և զործակցութեան զիտին մը գտնել: Բայց կ'է արհամարհանքի, հալածանքի, և գերակայութեան միտումները և ջանքերը ազատ ասպարէզ գանհն, եկեղեցիին և ժողովուրդը կը գիմհն դէպ ի անկում:

Հայութեան մէջ Հայ Աւետարանական եկեղեցիին դիրքը, գերը, զոյութեան իրաւունքը խորհրդածութեան առարկայ եղած են այս օրերս: Պէտք է լրջօրէն և իրապաշտօրէն, անաչառ և պաղարիւն դատողութեամբ խորհիլ այս մասին: Տիար Գր. Ա. Սարգսեան թիւ 6 «Փարոս»-ի մէջ կը թելադրէր որ Առաքելական և Աւետ. Հայ եկեղեցիները զործակցին ներքին առաքելութիւն մը կազմակերպելու մէջ, տարածելու համար քրիստոնէական իտէալներն ու սկզբունքները հանուր Հայութեան մէջ: Կարելի չէ ըսել թէ այս ի՛նչպիսի արձապանգ մը պիտի ունենայ Հայ կրօնականութեան մէջ: Բայց ուրախալի նշան մ'է այս՝ որ կը ցուցնէ թէ այս երկու եկեղեցիներու մերձեցումը զործնականացնելու համար ողջամիտ խորհողներ կան: Այն

եկեղեցիները որոնք իրենց պատեանին մէջ ամփոփուած՝ միայն իրենց զոյութեան շարունակութեամբ կը հետաքրքրուին՝ զուրկ են կենսունակութենէ, հետեւարար չեն կըրնար բարերար ազդակի մը գերը կատարել: Եկեղեցիին ազգեցութեան շրջանակէն զուրս կը գտնուի հայութեան ստուարագոյն մասը, ենթակայ այլասերումի, անբարոյացումի վտանգներուն: Եկեղեցիները պէտք է պաշտպանողականի դիմերէն զուրս ելլելով միացեալ ճակատ մը կազմեն հայութեան զոյութեան գէժ ապառնացող հոգեւոր և բարոյական ախտերու դէմ: Այլ ժամանակը հասած է որ նոյն ազգի այս երկու հատուածները՝ քանդելով զիրար անջատող պատուարները, զործակցութեան ոգիով, փոխադարձ յարգանքի և համակրութեան զգացումներով իրարու մօտենան համազգային կրօնական վերադարձումը յառաջ տանելու համար: Ահա այն ատեն Հայ եկեղեցիները զոյութեան իրաւունք մը պիտի ունենան:

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱՄՆԵՐ

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցին գաղափարական կեանքի զործունէութեան ընդարձակ դաշտն է: Հոս մը շահներուն յաջողութիւնը՝ իրենց պարգևուած Աստուածային կարողութիւնները դարգացնելով ներդաշնակօրէն զործածելուն մէջ կը կայանայ: Եկեղեցիի սուրբ և նուիրական պարտականութիւնը ստանձնել ինքնին ծանր պատասխանատուութիւն մըն է: Արուեստ մըն է ժողովուրդ մը առաջնորդելու գործը, և ան չի կրնար կատարելագործուիլ առանց գիտական, կրօնական ու հոգեւոր ճշմարտութեանց կիրարկումներուն:

Մենք, եկեղեցւոյ պարտիզպաններս, ժողովուրդը առաջնորդելու համար, որչափ աւելի կը կարօտինք հոգեբանական սկզբունքները միշտ ուսումնասիրելու, ընկերային երեւոյթներու և շարժումներու մասին լայն ու ողջամիտ գաղափարներ ունենալու, նկարագրի կազմութեան ու տնտեսական օրէնքին և միջոցներուն ծանօթանալու, միօրինակութենէ խուսափելով նորութիւններ գտնելու. քանզի այս կերպով միայն կարելի է ար-

դիւնաւոր զօրծ մը կատարել:

Երիտասարդութիւնը աշխարհի ոտնդծա-
զօրծ և յաղթական հանդիսացող հերոսն է: Ան
ներշնչման լաւագոյն աղբիւր մըն է: Կեանքի
տեսիլքի պահն է ինչպէս Հրեայ մարգարէն
գրած է:

Երբ մարդ երիտասարդութեան սահմանը
մտնէ իր մէջ կը ծնին նոր մարմնական ոյժեր և
նոր ընկերային գաղափարներ, նոր յուշում-
նալից փորձութիւններ, նոր փափաքներ և
իտէալներ: Եւ այս նորութիւնները կեանքը
ճշտացնելով օր ըստ օրէ անհատին աշխարհը
կ'ընդարձակեն: Երիտասարդի կեանքին մէջ
այս իրարու յաջորդող փոփոխութիւնները,
ընական և մասնաւոր միջոցներ և՛ Աստուծոյ
յայտնութեան:

Երիտասարդին մէջ անհատ կարելիութիւն-
ներ կան որոնցմով սքանչելիքներ կարելի է
գործել՝ եթէ խոհեմաբար առաջնորդուին:
Կրօնական խոր գագուտներու արթնցած ժա-
մանակն է այս: Հոգին ընդունակ է ներշն-
չուելու և փեղադրուելու. ան զիւրիւթեամբ
և բնականօրէն կը յուզուի: Ֆիզիքապէս,
մտաւորապէս կազմել պատշաճ ամեն բանի հա-
մար: Անձնաւորութեան միայնունհիմքը տե-
ղաւորելու թանկագին պատեհութեան շրջանն
է այս: «Ոճրագործութեան, ստեղծագոր-
ծութեան և կրօնական արթնութեան ու գար-
ձի ցուցակազրութիւնները կը յայտնեն թէ՛
ամենէն աւելի այս շրջանին մէջն է որ տնտեք
տնդի կ'ունենան: Ասոր համար է որ ընկե-
րական և կամ քաղաքական ու բարոյական
որ և է հիմնական յեղաշրջում մը չի կրնար
կատարուիլ: Մինչև որ ազգի մը կամ ժողո-
վուրդի մը երիտասարդութեան միտքն ու հո-
գին չի տողորուի անով:»

Երիտասարդներու շնորհած ներքին թա-
ղուն ոյժերը լման ծանօթ չին մեզի: Ե-
կեղեցիներու մէջ երիտասարդները ունենալ
ինքնին գանձ մ'է, իսկ այս գանձը օգտա-
գործել թուն հարստութիւնն է: Օրհնեալ
եկեղեցին մեծ թիւով երիտասարդներ ու-
նեցողը չէ, այլ ունեցած երիտասարդներու
տիրող, և անոնց երկնային հրաշալի կարո-
ղութիւնները զործածողն է:

Տխուր իրականութիւն մըն է որ երիտա-
սարդութեան մեծամասնութիւնը եկեղեցիին
հետ քիչ յարաբերութիւն ունի: Անոնք ան-

տարբեր կը գտնուին եկեղեցիին հանդէպ:
Կը յաճախեն ա'յն վայրերը ուր իրենց պէտ-
քերուն գոհացում կուտան, իրենց հետաքրք-
րութիւնը կ'արթնցնեն և իրենց երազներու
իրականացման խոստումներ կ'ստանան: Մա-
նաւանդ այս վերջին քառորդ դարու մէջ ըն-
կերային հետաքրքրական կազմակերպու-
թիւններ և ակումբներ զգալի կերպով շատ-
ցած են: Ասոնց՝ երիտասարդները խուճա-
խումբ գրաւելուն զաղտնիք իրենց ոսկեղէն
կանոններ կամ իտէալական գաղափարներ
ունենալին չէ, այլ հոս երիտասարդութեան
իրենց տարիքին համեմատ հետաքրքրական
գոհացումներ գտնելուն մէջ է: Հոս անոնք
եղած բանախօսութիւններու, ներկայացում-
ներու մէջ գործօն դերեր կ'ունենան: Անոնք
յաճախեցնուն համար կը յարգուին, համակ-
րութեան առարկայ կըլլան, և իրենց կատա-
րած հասարակ գործերուն համար չափէն ա-
ւելի հրապարակաւ գնահատուելով կը քա-
ջալերուին:

«Մենք անխախտ կերպով համոզուելու
ենք թէ եկեղեցիի յառաջդիմութեան համար
ընթացք բոլոր ճիգերն ու գոհողութիւնները
անօգուտ պիտի ըլլան, եթէ ան իր բոլոր ջան-
քը չուղղէ երիտասարդութեան, եթէ գանոնք
չանուցանէ իրենց մատաղ հասակէն սկսեալ
գաղափարական կեանքի ճշմարտութիւննե-
րով:»

Ո՞վ է բարեկարգիչը. ո՞վ է պատասխա-
նատուն. ո՞վ դաստիարակելով պիտի առաջ-
նորդէ, ղեկաւորէ այս երիտասարդութիւնը,
եթէ ոչ եկեղեցին: Եկեղեցին պէտք է տի-
րանայ իր գանձին, եթէ չուզեր տկար մնալ
և մահուան դատապարտուած:

Եկեղեցին պէտք է լուսաւորէ երիտա-
սարդները: Ան ո՛րչափ որ երիտասարդու-
թեան զարգացումին պատճառ կըլլայ՝ ա'յն-
չափ ալ ինք կը զարգանայ, ան ո՛րչափ որ
բարձրացնէ և ազնուացնէ գանոնք ա'յնչափ
ալ աստուծոյ թաղաւորութիւնը կը տարածէ:
Եկեղեցին պէտք է ըլլայ՝ և ստեղծէ միջոցը
այս գանձը զործածելու:

ԱԹԷՆՔ

Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

Ծն. — Ատամնաբոյժ Տիար Ս. Բուպանի անունը
սխալմամբ չէր յիշուած Աղիզիյէ Հայ Աւետ. Եկեղե-
ցիի չէնքի մասնախումբին մէջ, թիւ 17 Ն. Ա. ի «Շի-
նութեան Գործ»ը յօդուածին մէջ:

ԽՈՐՀԵԼՈՒ ՉՈՐՍ ԿԵՐՊԵՐԸ

Ա.

Մենք քիչ անգամ կը մտածենք թէ ի՞նչ պէտք կը խորհինք: Արդ մեկդի ձգելով մի վայրկեան փրկսոփաներէն փոխ առած մեր կարգ մը գաղափարները, տեսնելու ջանանք թէ ի՞նչեր կ'անցնին ու կը դառնան մեր ուղեղին մէջ:

Առաջին բանը որ կը նշմարենք սա է թէ՛ մեր խորհուրդները ահագին արագութեամբ մը կը յաջորդեն իրարու: Մենք մի քանի երկվայրկեանէ աւելի չենք կրնար կեդրոնացնել մեր միտքը միեւնոյն նիւթին վրայ: Մեր միտքը կարճ ժամանակի մը մէջ կրնայ յաջորդաբար բաղմամբիւ նիւթերու վրայ կեդրոնացնել իր ուշադրութիւնը: Ուէտտեն, եթէ մեզի հարցնեն թէ ի՞նչ բանի վրայ կը մտածենք, կրնանք անմիջապէս մի քանի բաներ ներկայացնել, որ միեւնոյն վայրկեանին մեր միտքերը կ'ընդունեն: Եթէ ուէտտեն մէկը վառանի պատասխանել այս հարցումին, ըսել է որ ինք չէր խորհեր ուէտ մի նիւթի շուրջ, այլ չուզէր արտայայտել իր խորհածները, քանի որ անոք անձնական նիւթերու շուրջ կը դառնային: Այս իրողութիւնը ամէն մարդու համար ճշմարիտ է:

Մարդիկ իրենց մտքի խորհուրդածութիւնները ճշգրիտ կերպով չեն կրնար իրարու արտայայտել: Մեր լեզուները խիստ փոքր մի մասը կրնան խօսիլ մեր խորհածներուն: Կեանքի մէջ չկայ վայրկեան մը երբ մարդկային միտքը բոլորովին դատարկ մնայ: Նա միշտ կը խորհի: Մենք շարունակաբար կը խորհինք երբ արթուն ենք: Իսկ քունի ժամերուն աւելի անկանոն կերպով կը խորհինք և երբոր խորհելու համար մասնաւոր նիւթ մը չունենանք, կամայ ակամայ կը տարուինք անկապ ու անորոշ խորհուրդներէ որոնք երազի հանգամանքը ունին: Խորհելու այս եղանակը կը կոչուի (ռեյքրի) բանդապուշել, որ մեր բացատրել ուղած խորհելակերպերուն առաջինն է: Ասիկայ մեր բնագոյական և սիրական խորհելու կերպն է. բանդապուշելու մէջ մեր միտքը ազատ թողուած է իր ուղած ուղղութիւնը առնելու. անոր ընթացքը կ'ուղղուի և կ'ազդուի մեր յոյսերէն և վախերէն, մեր փափաքներէն, մեր անյաջողութիւններէն, և մեր սիրոյ ու ատելութեան զգացումներէն:

Զկայ բան մը որ մեզի աւելի հետաքրքրական ըլլայ քան մեր նսերը: Եթէ մենք մեր միտքը մեր կամքի ոյժովը արտաքին բաներու վրայ չկեդրոնացնենք, անիկայ անպայման մեր եսին վրայ է որ կը մտմտայ: Այս տարօրինակ երեւոյթին ամէնքս ալ ենթակայ ենք: Երբեմն այս իրողութիւնը անտեսելու կը փորձուինք, բայց երբ անկեղծօրէն խորհինք անիկայ ակնյայտ կերպով մէջտեղ կ'ելլէ:

Բանգապուշանքը, այս անկապ գաղափարներու շարքը, վերջերս գիտական խուզարկութեանց ենթարկուած է: Խորհելու այս կերպը մեզի համար շատ բնական է: Ռեյքրին մեր կեանքին մեծագոյն մասը կը գրաւէ, սակայն անիկայ շատ քիչ անգամ սատարած է մեր զիտութեանց յառաջացման: Կան փրկսոփաներ որ այս խորհելակերպը կ'ուրանան, և ահա այս պատճառաւ իրենց տեսութիւնները յաճախ իրական չեն ըլլար: Բ.

Մեր ընդ մերթ, մենք կը տեսնենք թէ բանդապուշանքը տեղի կուտայ երկրորդ տեսակ խորհելակերպին: Յաճախ մենք պէտքը կըզգանք գործնական որոշումներ ընելու, նախ մը գրեմ թէ չգրեմ. ա՞յս ճամբէն երթամ թէ մէկալ ճամբէն. ընթրիքը ժամը վեցին ընեմ թէ եօթին: Որոշումներ տալու այս խորհելակերպը իրապէս առաջինէն կը տարբերի: Այն կը պահաջէ բաւական մտածում և կամք: Որոշում տալը բանդապուշէին աւելի կը յոգնեցնէ միտքը, և մասնաւորապէս երբ միտքը արդէն յոգնած է անիկայ անտանելի կ'ըլլայ:

Գ.

Երրորդ տեսակ խորհելու ձև մ'ալ կայ: Աս խորհելակերպը կ'արթննայ մեր մէջ երբ մեր նսին պատկանող ուէտ մի բան՝ անձնական գաղափար թէ հաւատք՝ դուրսէն յարձակում կը կրէ: Եթէ մենք մեզի թողուինք մեր միտքը զիւրութեամբ կը փոխենք: Բայց եթէ դուրսէն ուէտ մէկը մեր գաղափարներուն հակառակի, իսկոյն մեր մտքին մէջ անմիջական զգացում մը կը ծնի գանձնք պաշտպանելու: Մեզի վերաբերեալ գաղափարներու կազմութեան մասին մենք շատ անհոգ կը գրտնուինք: Բայց եթէ ուրիշ մէկը մեր անձնական համոզումներուն յարձակի անմիջապէս

մեր մէջ կ'արթննայ զօրաւոր փափաք մը պանոնք պաշտպանելու, որչափ ալ անոնք ինքնաբերաբար շինուած կամ ուրիշներէ առնուած ըլլան: Շիտակը խօսելով մեր պափարներուն յարձակումի ենթարկուելը չէ որ մեզի այսչափ դժուարին է, բայց մեր ինքնավստահութիւնն է որ այդ կերպով կը վերաւորուի: Բնութիւնը մեր մէջ զրած է բնազդ մը՝ որ մեզ կը մղէ ունէ յարձակումէ պաշտպանելու այն բոլոր բաները որ մեզն են: Քիչեր իրենց է՛ն սիրելի գաղափարներուն ազբուրը կ'ուսումնասիրին: Ուրիշ խօսքով մենք կ'ատենք պանոնք սորվիլ: Մենք կը սիրենք միշտ հաւատալ այն բաներուն զորոնք մինչև հիմա իբր ճշմարտութիւն ընդունած ենք: Երբ մեր գաւանանքը տարակուսելի կը ներկատուի ատելութիւն մը կ'զգանք որ մեզ կը մղէ պատճառներ գտնելու մեր անոր հակած ըլլալուն համար: Հետեւաբար՝ մեր տրանսպարանտանց մեծագոյն մասը կը թաղիմանց տրանսպարանտանքներէ գտնուի շարունակելու համար մեր հին հաւաստիք մեզ:

[Շարունակելի]

ԲՈՊԷՐՈՒ Ս. ՃԵՊԵՃԵԱՆ

Հետզեթեմբ. ձ. Հ. ԲԱՊԵՆՍԸՆԻ

ԹԵԼԱԿՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս պահուն երբ գարոցական տարեշրջանը լրացի է՝ սաւանական հարցումը կը ծագի մեր մտքերուն մէջ:

Ինչո՞ւ կը դաստիարակենք մեր մանուկները ի գին ամեն զոհողութեանց, ինչ է դաստիարակութեան բուն նպատակը: Այս հարցման շուրջ շատ մը կէտեր կրնանք յիշել, բայց անոնց բոլորը կրնանք ամփոփել հետեւեալ խօսքերուն մէջ: Դաստիարակութեան գրգռաւորագոյն նպատակն է մարդ անհատներ հասցնել: Նկարագրի տէր, վստահելի, հաւատարիմ, ուշիմ, ժրջան, կարող ու կըթուած անձերու պէտք ունինք մեր անձնական և հանրային կեանքին մէջ: Լայնախոհ, իր ընկերներու մէջ բարի յատկութիւններ տեսնելու տրամադիր, իր ընկերներուն յաջողութեանը վրայ բերկրացող, իր ազգին բարձրագոյն բարիքին զոհաբերուելու պատրաստակամ քրիստոնեաներու պէտք ունինք:

Կը դաստիարակենք մենք մեր մանուկները որպէսզի մենք անոնց արժէքը բարձ-

րացնենք: Դաստիարակութեան նպատակը պէտք է ըլլայ մարդուն արժէքը բարձրացնել:

Մարդուն արժէքն ու արժանիքը ո՛չ իր զիտցած լեզուներուն, և ո՛չ ալ իր ամբարած գիտութեանց ու ծանօթութեանց մէջը պէտք է փնտռենք, այլ իր անձնականութեան ու իր նկարագրին մէջ: Անհատին արժէքը չ'որոշուի իր հասակէն և կերպարանքէն, այլ իր վեհ հոգիէն: Դաստիարակութեան նպատակն է յղկել ու զարգացնել մանուկին ժառանգական կարողութիւնները, և անոնցմով կերտել նկար մը զիղեցկութեան ու ներդաշնակութեան, համեստութեան ու հեզութեան, սիրոյ ու բարութեան: Այն նկարը մարդը ինքն է:

Բազմրթ Լուի Սթիվենսըն օր մը ըսաւ իր մօրը. «Նայէ, մայրիկ, մարդ մը գծեցի թուղթին վրայ, անոր հոգին ալ գծեմ»։ Դո՛ւք, ո՞վ վեհմ պարտականութեանց յաճառու ուսուցիչներ և ուսուցչուհիներ, ձեզի յանձնուած մաքուր ու անարատ մանկանց մտքերուն վրայ մտապատկեր մը, նկարագիր մը, սուրբ հոգի մը գծեցէք: Այս թող ըլլայ ձեր նշանաբանը:

Արեմի

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՄԱՔՈՒՐ ԿԵԱՆՔԻ

Անգամ մը խումբ մը մարդիկ ածխահանք մը կ'այցելեն, որուն անցքին քով կատարելապէս ճերմակ բոյս մը կը տեսնեն: Այցելուները շատ կը զարմանան թէ ի՞նչպէս պղտիկ բոյսը այնչափ ածուխի սեւ փոշին մէջ մաքուր եւ ճերմակ կը մնար:

Հանքագործ մը՝ որ իրենց քով կը կենար՝ ածուխի սեւ փոշիէն ափ մը կ'առնէ և բոյսին վրայ կը թափէ, բայց փոշիի հատիկ մ'իսկ չի փակչիր բոյսին: Այցելուները նոյն փորձը կը կրկնեն, սակայն ածուխի փոշին նորէն չի փակչիր: Բոյսին ճերմակ թերթիկներուն վրայ զարմանալի թաղանթ մը կար՝ որուն վրայ ամենապղտիկ հիւլէ մ'իսկ չէր կրնար փակած մնալ: Բոյսը սեւ փոշիով լեցուն մթնոլորտի մը մէջ կ'ապրէր, սակայն որեւէ բան չէր կրնար զայն արատաւորել:

Քրիստոնէական կեանքի պատկերացումն է այս: Աշխարհը շատ չար է, ամբարիշտներու և անօրէններու հետ կը յարաբերինք մեր

առօրեայ գործերուն և երթեւեկութեանց մէջ. անմաքուր ազգականներ մեզ կը շրջապատեն. մեր պարտականութիւնն ու կոչումն է մաքուր ապրիլ այս բոլոր տգեղութիւններու մէջ: Եթէ Աստուած պզտիկ բոյսը այնպէս կ'ստեղծէ որ իր ճերմակութիւնը կարենայ անարատ պահել, կարող չէ՞ միթէ իր շնորհքով այնչափ փոխել քու սիրտդ ու կեանքդ որ ունէ մեղք քեզի շի կատչի: Եթէ Աստուած կրնայ ծաղիկը անբիծ և ձիւնի պէս ճերմակ պահել սեւ փոշիին մէջ, նոյն պէս կարող է մաքուր պահել սիրտդ մեղալից աշխարհի ապականութեանց մէջ:

Թարգմ. Պ. Լ.

ՃՇՄԱՐԻՏ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

Ճշմարիտ արիութիւնը հոգեկան յաղթանակ մ'է և ո'չ թէ մարմնական: Կարելի է չէ զայն մարմնական նշանով պիտակել: Ինչպէս ամին բան, նոյնպէս ճշմարիտ արիութիւնը վարժութեամբ կը վարպանայ: Անոր նշանը կզակի քառակուսածեւ ըլլալուն մէջ չէ ա'լ նպատակի հաստատութեան մէջ, շրթունքներու սեղմ ու ամուր ըլլալուն մէջ չէ ա'լ անոնց այնպիսի ձեւ տալուն մէջ՝ որ ճշմարտութիւններ խօսին: Չայն հոգիին խորութեա'ն մէջ պիտի գտնես, ո'չ թէ կուրծքին, ուղիղ ընթացքի մէջ՝ ո'չ թէ գոռոզ, հաստատ քալուածքի:

ԲՐՈՍ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՊԷՏՏԻ Է ԿՐՈՒՆԿՈՎ ԿՕՇԻԿ ԶՍԳՆԻԼ

Հիւսիսի ծայրագոյն սահմաններուն մէջ կրունկով կօշիկ երբեք չեն գործածեր:

Բարձր կրունկով կօշիկը ունայնամիտ ու կարճահասակ թաղաւորի մը գիւտն է: Գիւտը սին էր քանզի այս նորածնութիւնը ընկերութենէ ինկած ու կարճահասակ թաղաւորներու բարձրացման նպաստեց միայն:

Սակայն կրունկով կօշիկի բուն պատմութիւնը միզի մութ է և թէ տակաւին անհամաձայնութիւն կայ անոր վոյութեան պատճառին մասին: Ոմանք կ'ըսեն թէ կրունկով կօշիկը՝ քաւելլ աւելի ապահով կ'ընէ. անշուշտ սխալ է այս: Ընդհակառակը կրունկները սահիլ կուտան և այս է պատճառը որ Հիւսիսի ծայրագոյն սահմաններու մէջ մարդիկ առանձ

կրունկի կօշիկներ կը հագնին: Ուրիշներ կը ըսեն թէ կրունկները ողնայարի սիւնին ցնցումը կը պահպանեն, բայց ուտինէ կրունկը հնարունցաւ որ հաստատ կրունկէն յառաջ եկող ցնցումը չեղքացնէ:

Դիւրին է կրունկներ չզործածելու պատճառներ գտնել: Պատճառներէն մին սա է թէ կրունկները մարմնին ծանրութիւնը ոտքին առաջակողմը ճնշել կուտան, և ոտքին առաջակողմը այն տեսակ բեռ կրելու յարմարութեամբ չէ շինուած:

Մարդկային մարմինը բարեփոխուած է բայց ոտքէն: Անվիճելի է թէ մարդկային ոտքը երթալով աւելի կը տկարանայ: Հիմա հարցումը սա է թէ այս անկումին ո՞րքան մասը կրունկով կօշիկներ հագնելու սովորութեան վերադարձն է:

ՊՂԻՆՁԻ ԻԲՐ ԿԵՐԱԿՈՒՐ

Մինչև հիմա այնպէս ենթադրուած էր որ կերակուրի մէջի պղինձը փնտսակար է. հետեւաբար պղինձ պարունակող ներկերը կերակուրի մէջ գործածել բացարձակապէս մերժուած էր: Բայց հիմա ապացուցուած է թէ երբ ասոնք քիչ քանակութեամբ գործածուին օգտակար են:

Լիւքսեմբուրգէն համալսարանէն կարգ մը հետազօտիչներ սա կարծիքը յայտնեցին պղինձի մասին՝ թէ կաթը փոքր քանակութեամբ պղինձ կը պարունակէ, նաև ապացուցուած է թէ լեարդն ալ — անարիւնութիւնը բուժելու լաւ դեղ մը — փոքր քանակութեամբ պղինձ կը պարունակէ: Պղինձը կարեւոր դեր մը կը խաղայ առողջապահութեան և ախտերը արգիլելու մէջ:

Պղինձի բաղադրութիւնները լուծեալ վիճակի մէջ չափ մը ուտեալէ զիններու մէջ կը գտնուին, արդ պէտք չէ որ անոնք փնտսակար նկատուին:

ԱՐԶԵՍՏԱՒՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Մեղունները երկրաչափ են: Անոնց շինած միզրի բջիջները հիացում կը պատճառեն, անոնք ամենաքիչ քանակութեամբ մեղրամոմով ամենալայն միջոցները կը շինեն, տեղի նուազագոյն կորուստով մը:

Ոլուրդը օդերեւութարան մըն է, օծածուկը՝ էլիքտրագէտ մը: Նաւախեցիին նաւաղար մըն է. ան երբ ուզէ իր թեւերը կը

բարձրացնէ և կ'իջեցնէ, խարխալ կը ձգէ և ուրիշ շատ մը նաւորգային գործողութիւններ կը կատարէ: Թողուններու շատ մը ցիւղերը երգիչներ են: Կուզը ճարտարապետ մըն է, շինող և փայտ կտրող է: Մկնարջը երկրաչափ մըն է, ան ո՛չ թէ միայն տուններ կը շինէ ա՛յլ գանոնք չոր պահելու համար ջուրի ճամբաներ կը շինէ:

Պիծակը և իշամեղուն թուղթ կը շինեն: Կ'ըսուի թէ մեր գործածած թուղթի գիւտը անոնց կը պարտինք: Որովհետեւ Մոնկոլ մը կը գիտէ որ պիծակները և իշամեղունները իրենց բոյները շինելու համար սէգերու, յարկի և ուրիշ բոյներու միջուկը և խիւսը կը գործածէին:

Թրթուրները մետաքս կը շինեն: Մետաքսի հնարիչները իրենց առաջին գաղափարը ասոնցմէ առած են:

Մրջկանները ճարտարապետներ, զինուորական հանճարներ և զիւանադէտներ են: Անոնք իրենց գործերը կը վարեն գործակցական կամ ընկերվարական ծրագրի համեմատ:

Բաղեց

Օղէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՂՋԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Յունիս 29ին Ա. Բ. Վարժարանի վկայականներու բաշխումին հանդէսը կատարուեցաւ դպրոցին սրահին մէջ: Օտար լեզուով արտասանութիւններ, հայերէն ինքնատիպ ճառեր, խմբերգներ, ջութակի և դաշնակի ընկերակցութեամբ նուագներ յայտագրի մասեր կը կազմէին: Հայերէն ճառերը մասնաւոր գնահատումի արժանի են իրենց ողջամիտ և լաւ մտածուած պարտականութիւններուն և յստակ լեզուին համար: Միայն փափաքելի էր որ խօսողները աւելի բարձրը ձայնով և ուժով արտասանէին և կարգային իրենց կտորները, որպէս զի բոլոր ունկընդիրները կարենային վայելել գանոնք: Յայտագրին երաժշտական մասը իսկական վայելք մը պատճառեց ներկաներուն. աշակերտուհիները շատ լաւ երգեցին. Օր. Ա. Մանուկեան, երաժշտութեան ուսուցչուհին, շնորհաւորելի է մեծապէս, որ ջութակահար Տիար Ս. Պալլետերիանի հետ միասին հաւաքոյթներու զարդը կը կազմէ: Դպրոցին տնօրէնուհին վկայականները բաշխեց և դըպ-

րոցին մասին տեղեկութիւններ տուաւ:

Դպրոցը կը հաւասարի Մարաշի նախկին Ամերիկեան Աղջկանց Գոլէճին, ուսումնաւարտները պիտի կրնան Պէյրութի Ամերիկեան Համալսարանին Ֆրեշմէն կարգը մտնել: Այս տարուան ուսանողութեան թիւը եղած է 125, ուսուցչական կազմինը 12, որուն երեքը միայն Ամերիկացի: Միայն 22 աշակերտուհիք կըրցած են լրիւ վճարել իրենց թոշակները, 44 ը ձրի և 59 ը մասնակի վճարումով կարգացիր են: Աղջիկները լեզուներու մէջ յայտնի յառաջընթացին ցոյց տուած են: «Հայ աղջիկները մասնաւոր սէր և կարողութիւն կը ցուցնեն գիտական դասերուն մէջ» կըսէ Միս Ֆորմէն, դպրոցի տնօրէնուհին: Այս տարի դպրոցի ընթացաւարտներէն 20 հատը իբր վարժուհի պաշտօնավարած են զանազան դպրոցներու մէջ, 9 հատը իրենց ուսումը կը շարունակեն Պէյրութի հիւանդապահուհիներու վարժարանը և ուրիշ երկուքը Պէյրութի Բրիտանական վարժարանը: Զուգիտութեան և կարելու դասեր տրուած են աղջիկներուն. շատ ուրախալի էր տեսնել բոլոր ուսումնաւարտները հագուած իրենց իսկ կարած պարզ և ճաշակաւոր հագուստներովը:

ԹՂԹԱԿԻՑ

Աղեքսանդրէթէն Տիար Յովհաննէս Սարգիսեան կը գրէ.— Հոս Աւետ. համայնքը իր ուրոյն դպրոցը ունեցաւ 1927 Հոկ. ին, որ ներկայիս ունի հինգ կարգերու բաժնուած 34 երկսեռ աշակերտներ՝ մէկ վարժուհի խընամքին տակ: Գալ տարի յոյս ունինք երկու վարժուհի ունենալ, քանզի աշակերտութեան թիւը կ'աճի: Մեր համայնքին յատուկ տախտակաշէն խրճիթ մը իրը դպրոցի շէնք կը գործածուի:

Փարթըսլըի քարոզիչը Տիար Կ. Ալթունճեան կը գրէ.— Միջաբթուայ աղօթածողովներուն մասնակցողներու թիւն է 25-30, Կիրակնօրեայ աղօթածողովինը՝ 40-50, առտընուան և իրիկուան պաշտամունքներունը՝ 120-130: Մեր դպրոցին մէջ ունինք 30 երկսեռ աշակերտներ վեց կարգերու բաժնուած: Այս դպրոցին ուսուցիչը և վարժուհին են գիւղին կոյր և երաժշտասէր քարոզիչը և իր կ'ինը (Ծն. խմբ.)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

• ԷԻԷ •

Կէտերուն տեղը գիր գիր՝ և պիտի ունենաս Ղևտացուց իշխաններէն մին (Սուրբ Դրբէն):

• Կ. աւո. •

Կէտերուն տեղը գիր գիր՝ և պիտի ունենաս Եգիպտոսի թագաւորներէն միոյն անունը (Սուրբ Գրբէն):

բ. Յ. 1. 7.

Կրնաս այս թուրքերէն նախագասութիւնը կարդալ. վերջինը տաճկերէն իսկ առաջին երեքը հայերէն պիտի կարդացուի:

1, 8ւ = զօրւււււււ

Կրնաս այս հայերէն նախագասութիւնը կարդալ:

Գեղեցիկ ոտանաւոր մը կրնաս գրել, այնպէս ոտանաւոր մը որ երեք տող միայն ունենայ, իւրաքանչիւր տողը հինգ վանկ միայն ունենայ, որուն մէջ գտնուի, սէր, վախ, մինակութիւն, Յատուկ անուն մը, ածական մը, և վերջապէս մտերմական գեղեցիկ խրատ մը:

Կանչէ՛, կոռնկ, կանչէ՛,

• • • • •
• • • • •
• • • • •

Ասիկայ չորս տողով իրական ոտանաւոր մ'է, առաջին տողը տրուած. գտնել կամ յարմարցնել միւս երեք տողերը, այնպէս որ իւրաքանչիւր տող վեց վանկ ունենայ ճիշդ ա-

ռաջին տողին պէս, և ամբողջութիւնը չը լըսուած պատմութիւն մը ըլլայ՝ երկու տղայոց վրայով. պէտք է նաեւ այդ տղայոց հագուստին նկարագրութիւնը սոյն ոտանաւորին մէջ:

Մեր ծերունագարգ փրօֆէսօրներէն Իրջանկայիշատակ Փրօֆ. Ալիքսան Պէզճեանի հանկուկներէն մին:—

Օլ նէ՞ տիր քի հէր նասըլ տա թութսան՝ տախիմա պաշը հօգարը:

ԳՈՒԹ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԵՊ

Ընդհանուր պատերազմի մոլեգին ճակատամարտներէն մէկուն միջոցին, Անգլիացի սպայ մը տեսաւ Գերմանացի սպայ մը որ փրշապատ թելերուն ցանցին վրայ ինկած կը գալարուէր բուռն տանջանքներու մէջ: Կըրակը սոսկալի էր, հոն անմիջապէս կախուած էր ան: Վերջապէս Անգլիացին կ'ըսէ. «Ես ա'լ չեմ կրնար գիմանալ այս մարդուն սրտայոյզ տանջանքին»: Եւ անմիջապէս դուրս կը ցատկէ խրամէն, ուղմբերու տեղատարափին տակ կը վերցնէ գայն փշապատ թելերուն վըրայէն, և շալկելով գերմանական խրամը կը տանի:

Կրակը կը զաղրի: Մինչ երկու կողմերն ալ զարմացումով կը զիտէին այս տեսարանը, Գերմանական հրամանատարը իր խրամէն դուրս կ'ելլէ, իր կուրծքէն երկաթեայ խաչը կը հանէ և Անգլիացիին կուրծքին վրայ կը կախէ գայն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱՍԳՐԱԿԱՆ

Եկեղեցին և Եկեղեցիներ

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Եկեղեցին և Երիսասարդութիւն

Կ. ՅԱՐԱՃԵԱՆ

Խորհելու Չորս Կերպերը

Բ. Ա. ՃԵՊԵՃԵԱՆ

Թեաղորութիւն մը

Յ. Տ. ՂԱԶՍՐԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Մաքուր Կեանքը

ԹԱՐԳՄ. Պ. Լ.

Ճշմարիտ Արիւթիւնը

ԲՐՈՍ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկչաբարթաթերթ:

Արտօնատէր,

Վեր. Կ. Յարութիւնեան

Պատասխանատու Տնօրէն, Տ. Ճ. Խրըրեան

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար

տարեկան

2 Մէճիտ

Արտասահման

» »

1 Տօլար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE